

ԵՐԿՈՒ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 24: 1915 թվականի հայ նահատակաց հիշատակի օր: Օրը՝ կիրակի:

Կեսօրին տանից դուրս եկա և ուղղություն վերցրեցի դեպի Ծիծեռնակաբերդ: Քաղաքը արտասովոր իրարանցման մեջ էր: Զգացվում էր, որ բոլորի միտքն ու հոգին, էությունը կլանված էր Ծիծեռնակաբերդով, մի բարձունք, մի սրբատեղի, որտեղ հանգչում են 1915 թվականի անմեղ զոհերի անհայտ գերեզմաններից բերված մասունքները:

Տրամվայ նստելուցս մի քանի կանգառ հետո, վազքով վագոն բարձրացան երկու մանկահասակ տղաներ և չարաճճիորեն մոտեցան ու նստեցին իմ ետևի նստարանին: Երեխաներից մեկը կլիներ ութ, իսկ մյուսը՝ տասը տարեկան: Նրանց հագ ու կապից երևում էր, որ երկուսն էլ բարեկիրթ և ապահովված ընտանիքի զավակներ են: Փոքրը մի քիչ փնթիի տպավորություն էր թողնում: Դա էլ, հավանաբար, գալիս էր նրա մանկական տարիքից:

Նստելուն պես նրանք սկսեցին աղմկել, երգել, փայտի կտորը շվի դարձրած՝ նվագել: Ես շրջվեցի և մեղմ կերպով դիտողություն արեցի նրանց: Նրանք անմիջապես դրսևորեցին իրենց ընտանեկան բարեկիրթ դաստիարակությունը և լռեցին: Երբ ես դիտողության համար շրջվեցի դեպի նրանք, նրանց մոտ նկատեցի մի անսովոր բան: Ավագի ձեռքին կար յասամանի թարմ մի ծաղկեփունջ:

Հետաքրքրություն ինձ ստիպեց հարցնելու, թե այսպես, առանց ծնողների ո՞ւր են գնում նրանք:

— Ծիծեռնակաբերդ,—հստակ և համարձակ համարյա միասին պատասխանեցին երեխաները:

— Իսկ դուք կարո՞ղ եք միայնակ, առանց մեծերի տեղ հասնել,—հարցրեցի:

— Մեր ավագ ընկերները մեզ բացատրել են, թե ինչպես տեղ հասնենք,—պատասխանեց ավագը:

Ես որոշեցի հետևել նրանց և ակամայից դարձա նրանց աներևույթ ուղեկիցը: Նրանք իջան երկաթգծի կայարանի կանգառում, մտան մետրոյի

«Սասունցի Դավիթ» կայարան և, անցնելով հսկիչի մոտով՝ անշուշտ առանց վճարելու մուտքի համար, նստեցին վագոն և ապահով կերպով հասան «Բարեկամություն» կայարան:

Առանց ներքուստ ապրելու օրվա ծանր խորհուրդը, երեխաներն ամբողջ ճանապարհն անցան ուրախ և զվարթ: Նրանց մեջ խոսում էր մանկական չարաճճիությունը, միամտությունը և, անշուշտ, այն եռանդն ու էներգիան, որը նրանց մոտ կուտակվել էր՝ օրվա ընթացքում ծախսվելու համար:

Ծիծեռնակաբերդի բլրի ծառուղիներն ավարտվեցին, և ժողովրդի բազմահազարանոց հոսքը մոտեցավ Նահատակաց հուշահամալիրի այն մասին, որտեղից այլևս ուղիղ գծով պետք է մոտենայինք հուշարձանին: Երբ երևաց հուշարձանը, երեխաները կարծես միանգամից կերպարանափոխվեցին, դարձան լռակյաց, մտահոգ, ինչպես իրենց հոսանքով տանող ժողովուրդը:

Հասանք անմար կրակին: Կրակի շուրջ արդեն գոյացել էր ծաղիկների մի հսկայական օղակաձև բլուր: Այստեղ երեխաները կանգ առան, ավագը իր ձեռքի ծաղկեփունջը բաժանեց երկու մասի, մի մասը տվեց կրտսեր ընկերոջը, այնուհետև երկուսով միասին մոտեցան օղակաձև ծաղկաբլուրին և իրենց կեղտոտ, փնթի, սակայն անմեղ ու սուրբ թաթիկներով յասամանի երկու փունջ ծաղիկները լո՜ւռ դրեցին այնտեղ: Ապա մի պահ դիտեցին իրենց շուրջը, կարծես լո՜ւռ խոկումի պահ ապրեցին:

Այնուհետև, կարծես սթափվելով «թմբիրից», արագ կերպով բարձրացան աստիճաններով և դուրս եկան հուշարձանի անմար կրակի հատվածից: Այդ պահից իսկ նրանք կարծես կրկին վերափոխվեցին, դարձան նորից այն երեխաները, որպիսին էին մինչ հուշարձանին մոտենալը: Ապա ուրախ ու զվարթ թռչկոտելով կորան ալիքվող բազմության հոսանքի մեջ: Ինչպես երևութապես հայտնվել էին ինձ, այնպես էլ երևութապես անհայտացան իմ տեսադաշտից:

Այս շուրջ երկժամյա գործողությունների ընթացքը ինձ համար աներևակայելի, հեքիաթային իրողություն թվաց: Ովքե՞ր էին այդ փոքրիկները, ինչպե՞ս կարողացան նրանք օրվա խորհրդի հետ կապված այդ անմեղ ցանկությունը իրականություն դարձնել: Եվ այդ ծաղկեփունջն էլ հավանաբար նրանք թոցրել էին կա՛մ իրենց և կա՛մ էլ մի որևէ հարևանի այգուց:

Հավանաբար Նախախնամության թելադրանքո՛վ այդ երկու փոքրիկները երևույթ դարձած եկան և իրենց անմեղ ու սուրբ ձեռքերով երկու փունջ ծաղիկներ դրեցին պատմական Հայաստանի 12 նահանգներից Մեծ եղեռնի զոհ դարձած իրենց հասակակից երեխաների անհայտ, բայց վեր հառնած պայմանական հավաքական շիրիմներին:

Ինձ մոտ բուռն ցանկություն առաջացավ մի ակնթարթ գոնե նորից տեսնել նրանց... Բայց նրանք այլևս չկային, անհետացել էին, ձուլվել ալիքվող բազմությանը:

ՎԼԱԴԻՍԼԱՎ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ